

ցանք մինչև այժմ։ Զպէտք է մոռանանք հին փորձերն ու փորձանքները և միահամում ուժերով դիմենք առաջ։

L. U.

Օգոստոսի 3

Կովկասսան երկրի բնակիչներին

Մի քանի ժամանակից ի վեր, մանաւանդ ներկայ տարուայ փետրուարի 5—10 Բազուի ախուր դէպերի օրերից յետոյ, Կովկասի երկու ազգութիւնների՝ հայերի և մուսուլմանների մէջ եղած փոխադարձ յարաբերութիւնները ստացան չափազանց թշնամական բնաւորութիւն և Բազուի աղէտակից յետոյ առաջ եկան արիւնու ընդհարումներ յիշեալ երկու ազգութիւնների մէջ՝ նախ Նախիջևանում և Նախիջևանի գաւառում և ապա Երևանում և Երևանի Նահանգի զանազան տեղերում։ Անկարգութիւնների տևողութիւնը՝ շնորհիւ այն հանգամանքի, որ դրանք ծագում էին ցիրուցան տեղերում և հեռու զօրքի բնակավայրերից, և գուցէ տեղական իշխանութիւնների մի քանի դէպերում կարգադրութեան բացակայութիւնից, առիթ տուին մի կողմից մնարեմիտ անձանց՝ ժողովրդի մէջ լուր տարածելու՝ իբր թէ այդ անկարգութիւնները քաջալերութիւն են ստանում կառավարութիւնից և միւս կողմից՝ հաւատատալու այդ լուրերին։ Անուշադիր թողնելով այդ չարամիտ, հնարովի լուրը, որ հակասում է առողջ գատողութեան, ես պարտք եմ համարում դանալ Բարձրագոյն կամքով իմ կառավարութեան յանձնուած երկրի բնակիչներին՝ առանց խորութեան կրօնի և ազգութեան, հրաւիրելով նրանց մոռանալ կորստաբեր տոհմային թշնամութիւնը, որ տանում է դէպի փոխադարձ կոտորած և աւերում, և միանալ միահամուռ աշխատանքի ի բարօրութիւն Կովկասի, ի բարօրութիւն կանանց և երեխայոց, յիշելով որ միայն ընդհանուր խաղաղ աշխատանքը ազգութիւնների՝ որոնք պատճական ճակատագրով անքակտելի կերպով կապուած են իրար Ռուսաց Պետութեան Գայսոնի տակ, կարող է օգնել ծաղկեցնելու թէ ամբողջ տէրութիւնը և թէ Նորին Կայսերական Մեծութեան իւրաքանչիւր հաւատարիմ հպատակին առանձնապէս։

Ձեռնարկելով բացառիկ միջոցների, ի պաշտպանութիւն այն տեղերի, ուր վերջին ժամանակ կատարուեցան տխուր ընդհարումներ և ուր յաճախ կրկնուեցան քստմնելի յանցանքներ, ես ցանկանում եմ հաւատալ որ դէպի բնակիչներն ուղղած իմ անկեղծ համոզմունքի խօսքը աւելի շուտ առաջ կը բերէ խա-

դաղութիւն և կրքերի հանդարտութիւն, քան զինուորական դը-
րութեան այն խիստ կանոնները, որոնց վերացնելու համար
կը միջնորդեմ Թագաւոր Կայսեր առաջ անյապաղ այն դէպք-
ում, հէնց որ այդ կարելի կը լինի:

Հրաւիրելով դէպի կրքերի հանդարտութիւն և խաղաղ
աշխատանք, մեծայոյն եմ որ բնակիչների մէջ յարգ ու պատիւ
վայելող ազգեցիկ անձինք, մանաւանդ բոլոր կրօնների տեղա-
կան հոգևորականութիւնը, չեն խնայիլ իրանց բեղմնաւոր օգ-
նութիւնը այս դէպքում:

Հերիք են թշնամութիւն, փոխադարձ սպանութիւններ, ա-
ւերածներ և գաղտնի անվստահութիւն. հերիք են սրանցից ա-
ռաջացած խովութիւնները, հերիք է զուր թափուած արիւնն ու
արտասուբը:

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ,
գեներալ-ադիւդանտ կոմս Վորոնցով-Դաշկով:

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ
գեներալ աղիսլանտ Կոմս Վորոնցով-Դաշկովի Յայտարա-
բութիւնը

(Շրջաբերական՝ ուղարկուած նահանգապետներին, գաւառապետներին, ու-
տիկանապետներին, պրիմատաներին գիւղական ժողովրդի մէջ տարածելու
համար):

Մեր ամենաողործած Թագաւոր Կայսրի կամքով և վստա-
հութեամբ իմ կառավարութեան յանձնուած այս երկիրը գալով,
ես ցաւօք սրտի տեսայ, որ մի քանի տեղերում գիւղացիները,
չարամիտ մարդկանցից դրդուած՝ համարձակուել են ինքնակամ
և բռնի գրաւել մասնաւոր կալուածատէրերի հողերը և անտառ-
ները, ոչնչացրել են նրանց տները և կողոպտել ստացուածքը:
Մրա հետ միասին, իմ գիտութեան հասցրին և զանազան դի-
մումներ ու ցանկութիւններ, որ անում էին գիւղացիները բե-
րանացի և գրաւոր՝ իրանց տնտեսական և հասարակական կա-
րիքների մասին: Յայտարարում եմ Կովկասի երկրի բոլոր
գիւղացիներին.—1) Օրէնքը խիստ պաշտպանում է ամեն
սեփականութիւն անիրաւացի ձեռնմխութիւնից և առաւել
և բռնի յափշտակութիւնից և ենթարկում է այդ տեսակ յան-
ցաւրներին ոչ միայն ծանր պատժի, այլ նիւթական պատաս-
խանատութեան, ուրիշի սեփականութեան վնաս պատճառելու
համար: Այսպէս, Թագաւոր Կայսրը՝ իր Բարձրագոյն ուկազով,
գրուած կառավարչական սենատին ապրիլի 10-ին 1905 թ.,
Բարձրագոյն հրամայել բարեհաճեց՝ սահմանել անկարգութիւն